



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

1457

Քողետազներ բոլոր յերկրների, միացե՛ք



Ն. ԼԵՆԻՆ

ԿՈՊՊԵՐԱՑԻԱՅԻ

ՄԱՍԻՆ

3

3K23

4

4-71

1924

Հ.Կ.Կ.Կ.Կ. ԱԳԻՑ-ԱՅԺՆԻ

ՀՐԱՑԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

10.09.2013

26 MAY 2005

2123

Հ. Կ. Կ. Կ. Կ. ԱԳԻՏ-ԲԱԺՆԻ ՀՐԱՏԱՐԱԿ. № 41

ԿՈՈՊԵՐԱՑԻԱՅԻ ՄԵՐԻՑ  
14 NOV 2008

կր.

300

1308-ԼԵ



Ն. ԼԵՆԻՆ (Վ. Ի. ՌԻՅԱՆՈՎ)

1003  
11117

# ԿՈՈՊԵՐԱՑԻԱՅԻ

## ՄԱՍԻՆ

Թարգմանություն  
Հ.Կ. ԹՈՒՄՅԱՆԻ

ՅԵՐԵՎԱՆ  
1924

## ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

Կոոպերացիայի խնդիրը լինելով մեկը մեր ժամանակի ամենաակազմաբաշխող շինարարություններից, շատ եր զբաղեցնում էր ինքնին: Նա հաճախ անդրադառնում էր նրան յնվ ամեն կերպ աշխատում բացատրել վոչ միայն իր հին աշակերտներին՝ բուլշևիկական կուսակցության կողմից, — այլ յնվ աշխատավորության լայն մասսաներին, թե ինչ աստիճան կարեվոր է այդ խնդիրը:

Կոոպերացիան հատուկ կարեվորություն ձեռք բերեց Նեպի ժամանակ, պետական կապիտալիզմի պայմաններում: Ուստի հասկանալի է, թե ինչու մեր ուսուցիչը յնվ ղեկավարն իր ամենավերջին հողվածներին մեկը նվիրեց կոոպերացիայի խնդրին:

Այստեղ առաջին տեղը տալով այդ հողվածին, մենք գետնից ենք նայել միջանի հատվածներ ընկեր կենսի աշխատություններից, վորոնց մեջ նա շոշափում է կոոպերացիայի խնդիրը:

Ինձ թվում է, վոր մեզանում բավականա-  
չափ ուշադրութիւն չի դարձնվում կոոպերա-  
ցիային: Չի կարելի ասել, թե ամենքն են հաս-  
կանում, վոր այժմ կոոպերացիան մեզանում  
ստացել է միանգամայն բացառիկ նշանակու-  
թիւն, սկսած Հոկտեմբերյան հեղափոխութեան  
ժամանակից և անկախ Նեպից (ընդհակառակը,  
այդ տեսակետից պետք է ասել, վոր հենց Նե-  
պի շնորհիվ): Հին կոոպերատորների գաղափար-  
ների մեջ յերևակայական շատ բան կա: Նրանք  
հաճախ դառնում են ծիծաղելի իրենց ֆանտաս-  
տիկութեամբ: Յե՛վ ինչո՞ւմ է նրանց այդ ֆան-  
տաստիկութիւնը: Նրանում, վոր մարդիկ չեն  
հասկանում շահագործողների տիրապետութեա-  
նը խորտակելու համար բանվոր դասակարգի  
մղած քաղաքական կռիւի հիմնական, արմատա-  
կան նշանակութիւնը: Ներկայումս մեզանում  
այդ խորտակումը տեղի յե ունեցել և այժմ  
շատ բան, ինչ յեղել է ցնորական, ոտմանտիկ  
և անգամ գոեհիկ հին կոոպերատորների գաղա-  
փարների մեջ՝ դառնում է ամենասուղածույճ  
իրականութիւն:

Մեղանում, իսկապես, քանի վոր պետական իշխանությունը բանվոր դասակարգի ձեռքին և, քանի վոր այդ պետական իշխանությանն և պատկանում արտադրության բոլոր միջոցները՝ մնում և միմիայն իրադործել ազգաբնակչության կոոպերացման խնդիրը: Ազգաբնակչության զերագույն չափի կոոպերացման ճանապարհով ինքնին հասնում և նպատակի այն սոցիալիզմը \*), վորն անցյալում առաջ եր բերում իրավացի ծաղր, արհամարհական ժպիտ և վերաբերմունք այն մարդկանց կողմից, վորոնք քաղաքական իշխանության համար մղվող դասակարգային կռվի անհրաժեշտության համոզված կողմնակիցներ էյին: Յե՛վ ահա բոլոր ընկերները չեն իրենց հաշիվ տալիս այն մասին, թե ներկայումս ինչպիսի հսկայական և անսահման նշանակություն և ստանում մեզ համար Ռուստոտանի կոոպերացումը: Նեպր մի զիջում եր, վոր մենք արինք դյուղացուն վորպես առևտրականի, մի զիջում՝ մասնավոր առևտրի սկզբունքին: Հենց սրանից ել բղխում և (հսկառույ նրան՝ ինչ կարծում են) կոոպերացիայի հսկա-

\*) Ընկեր Լենինը նկատի ունի այն սոցիալիզմը, վորին կամենում էյին հասնել հին կոպերատորները խաղաղ զարգացման ճանապարհով կապիտալիստական կարգերի ցրահակում: Ծանոթ. թարգմ.

յական նշանակությունը: Եյապես առած՝ Նեպր տիրապետության ժամանակ ազգաբնակչությունը բավարար չափով ընդարձակ և խոր կոոպերացման յենթարկելը պետք և համարել այն ամենը, ինչ մեզ հարկավոր և, վորովհետև ներկայումս մենք գտել ենք մասնավոր շահի, մասնավոր առևտրական շահի միացման և այդ շահը պետության հսկողությանը և ստուգությանը յենթարկելու և նրան ընդհանուր շահերին ստորագասելու այն աստիճանը, վորն անցյալում շատ և շատ սոցիալիստների առաջ արգելքներ եր հարուցանում: Հերավի. այժմ՝ յերբ պետության իշխանությունը տարածվում և արտագրության բոլոր խոշոր միջոցների վրա, յերբ այդ իշխանությունը գտնվում և պրոլետարիատի ձեռքում, յերբ բազմամիլիոն մանր և մանրագույն գյուղացիության ու պրոլետարիատի միջև միություն և ստեղծված, յերբ դյուղացիության վերաբերմամբ ապահովված և պրոլետարիատի ղեկավարությունը և այլն — այդքանն ել բավական և, վորպեսզի ոգավելով կոոպերացիայից (վորին մենք չարչիական էյինք համարում առաջներում և վորոշ կողմերից այդպես համարելու իրավունք ունենք և այժմ, Նեպր ժամանակ), կարողանանք լիակատար սոցիալիստական հասարակություն կառուցել: Դա տակավին սո-

ցիալիստական հասարակութիւնն կառուցել չեն, բայց դա այդ կառուցման համար անհրաժեշտն ու գոհացուցիչն է:

Ահա հենց այս հանգամանքն է, վոր լիովին չի գնահատված մեր պրակտիկ գործիչներէց շատերի կողմից: Մեզ մոտ կոոպերացիային արհամարհանքով են նայում, չհասկանալով, թե ինչպիսի բացառիկ նշանակութիւնն ունի այդ կոոպերացիան, նաև՝ սկզբունքային տեսակետից (արտագրութեան միջոցները կազմում են պետութեան սեփականութիւնը) սպա՛ նոր կարգերին ավելի պարզ, դյուրին յսկ գյուղացուն մատչելի յեղանակով անցնելու տեսակետից:

Այլ բան է սոցիալիզմի կառուցման համար ամեն տեսակի բանվորական միութիւններին վերաբերյալ յերևակայութիւններն մեջ՝ ընկնել, այլ բան է սովորել գործնականորեն կառուցել այդ սոցիալիզմը, այնպես, վոր յուրաքանչյուր մանր զյուղացի կարողանա մասնակցել այդ կառուցման աշխատանքներին: Հենց այդ աստիճանին էլ մենք հասել ենք ներկայումս: Յե՛վ անկասկած է, վոր մենք հասնելով նրան՝ ոգավում ենք նրանից չափազանց քիչ: Մեր սխալը, Նեպոլին անցնելով, կայանում է վոչ թե նրանում, վոր չափազանց մեծ տեղ հատկացրինք ազատ արդյունաբերութեան և առևտրի սկզբունքին,

այլ նրանում, վոր անցնելով Նեպոլին՝ մոռացութեան տվինք կոոպերացիան, վոր սկսեցինք մոռանալ կոոպերացիայի հակայական արժեքը, իր վերսնիշխալ յերկու նշանակութեամբ:

Յեն այժմ մտադիր եմ խոսելու ընթերցողի հետ այն մասին, թե Գործնական ինչ կարելի չէ և պետք է անել անմիջապես, յեղնելով այդ «կոոպերատիվային» սկզբունքից: Ի՞նչ միջոցներով կարելի չէ և պետք է սկսել անմիջապես զարգացնել այդ «կոոպերատիվային» սկզբունքը այն ձևով, վոր ամենքի և յուրաքանչյուրի համար պարզ լինի նրա սոցիալիստական նշանակութիւնը:

Կոոպերացիան քաղաքականապես պետք է այնպես գնել, վոր նա վոչ միայն ընդհանրապես և ամեն ժամանակ ունենա վորոշ արտոնութիւնն, այլ և վորպեսզի այդ արտոնութիւնը ինի զուտ ստացվածքային: Պետք է կոոպերացիային ոգնել պետական փոխատուութեան այնպիսի միջոցներով, վորոնք թեպետ և քիչ, բայց և այնպես գերազանցում են այն փոխատուական միջոցներին, վոր տրամադրում ենք մասնավոր ձեռնարկութիւններին, բացառութիւն չանելով անգամ ծանր արդյունաբերութիւնը և այլն:

Յուրաքանչյուր հասարակական կազմ ստեղծվում է միայն վորոշ դասակարգի ֆինանսա-

կան պաշտպանութեամբ: Ավելորդ է հիշեցնել այն հարյուրավոր և միլիոնավոր ուղբիւնների մասին, վոր նստեց «ազատ» կապիտալիզմի ծնունդը: Այժմ մենք պետք է գիտակցենք և դորձ զարձնենք այն՝ վոր ներկայումս միակ հասարակական կազմը, վորը մենք պետք է պաշտպանենք սովորականից ավելի, կոոպերատիվ կազմն է: Բայց պետք է պաշտպանել նրան բառիս իսկական իմաստով, այսինքն այս պաշտպանութեան տակ բավական չէ հասկանալ վորևիցէ կոոպերատիվային շրջանառութեան պաշտպանութեան, այլ պաշտպանութեան այնպիսի կոոպերատիվային շրջանառութեան, վորին իրապես մասնակցում են ազգաբնակչության գործոն մասամբերը: Կոոպերատիվային շրջանառութեանը մասնակից գյուղացուն նվեր տայն անպայման շիտակ գաղափար է, բայց դրա հետ միասին այդ մասնակցութեանը, նրա գիտակցութեանն ու վորակն ստուգելն հանդիսանում լինողը կոոպերատիվ: Յերբ գյուղ է գալիս կոոպերատորը և խանութ հիմնում այնտեղ, ազգաբնակչութեանը, ստույգ սասած, այդ բանին վոչնչով չի մասնակցում, բայց միևնույն ժամանակ նա դրգված իր սեփական ոգուտից՝ կը վորձի մասնակցել նրան:

Մեզ տակավին շատ քիչ բան է մնում անել «քաղաքակիրթված» (նախ և առաջ գրողեմ)

յեվրոպացու տեսակետից, վորպեսզի ստիպենք ամենքին գլխովին մասնակցելու կոոպերատիվային դորձանութեաններին և մասնակցելու վոչ թէ պասեփ, այլ ակտիվ կերպով: Իսկպղես սասած, մեզ մնում է «միմիայն» մի բան՝ մեր ազգաբնակչութեանը դարձնել «քաղաքակիրթ» այն շտիով, վոր նա հասկանա կոոպերացիային գլխովին մասնակցելու բոլոր սղուտները և սկսի մասնակցել «Միմիայն» այս Ուրիշ վոչ մի իմաստութեան մեզ պետք չէ ներկայումս սոցիալիզմին անցնելու համար:

Բայց վորպեսզի կարողանանք իրագործել այս «միմիայնը», մեզ պետք է մի ամբողջ հեղաշրջում, պետք է ընդհանուր ժողովրդական մատայի կուլտուրական զարգացման մի ամբողջ շերտ: Ուստի մեզ համար որենք պետք է դարձնենք՝ վորքան կարելի չէ քիչ իմաստակութեան և քիչ սեթեթութեաններ անել: Նեպն, այս տեսակետից հանդիսանում է հառաջագիմութեան այն մարտի, վոր նա հարմարվում է սովորական գյուղացու պատրաստութեան մակարակին, վոր նա այդ գյուղացուց վոչ մի բարձր բան չի պահանջում: Բայց վորպեսզի նեպի միջոցով կարելի լինի ամբողջ ազգաբնակչութեանը գլխովին մասնակից դարձնել կոոպերացիային, այդ բանի համար է, վոր պահանջ-



վում և մի ամբողջ պատմական դարաշրջան: Բարեհաջող պայմաններում մենք կարող ենք անցնել այդ դարաշրջանը մեկ-շերկու ատանամյակներում: Այնուամենայնիվ դա կըլինի մի ատանձին, պատմական դարաշրջան: Առանց այդ պատմական դարաշրջանի, առանց ընդհանուր գրագիտության, առանց բավականաչափ բանիմացության և ազգաբնակչությանը գրքերից ոգավել սովորեցնելու, առանց դրա համար անհրաժեշտ նյութական հիմունքների, վորոշ ապահովության, որինակ՝ անբերրիությունից, սովից և այլն, մենք մեր նպատակին հասնել չենք կարող: Այժմ ամբողջ խնդիրը նրանումն է, վոր կարողանանք միացնել մեր հեղափոխական թափը և ենտուղիագմը (վորը մենք արգեն հայտնաբերել ենք և հայտնարերել ենք բավարար չափով ու պահել լիակատար հաջողությամբ), քանիմաց և գրագետ առևտրական դառնալու ընդունակության. դա միանգամայն բավական է լավ կոպերատոր լինելու համար: Առևտրական դառնալու ընդունակությունն ասելով յես հասկանում եմ կուլտուրական առևտրական դառնալու ընդունակությունը: Այս թող չմոռանան այն մարգիկ, կամ ուղղակի գյուղացիները, վորոնք մտածում են այսպես՝ ճքանի վոր նա կարողանում է առևտուր անել, կնշանակե ըն-

դունակ է առևտրական դառնալու: Իս միանգամայն սխալ է: Առևտուր անելուց մինչև կուլտուրական առևտրական դառնալը դեռ ևս շատ հեռու է: Ես առևտուր է անում ներկայումս սփական ձևով, բայց վորպեսզի կարողանա դառնալ իսկական առևտրական՝ պետք է կարողանա առևտուր անել յեվրոպական ձևով: Սրանից նրան գատում է մի ամբողջ դարաշրջան:

Վերջացնեմ: Կոպերացիային պետք է շնորհվի մի շարք տնտեսական, ֆինանսական և բանկային արտոնություններ—սրա մեջ պետք է կայանա մեր սոցիալիստական պետության պաշտպանությունը ազգաբնակչության կողմակերպության նոր սկզբունքին: Բայց սրանով խնդիրը զրվում է դեռ ևս ընդհանուր ձևով միայն, վորովհետև այստեղ տակավին մնում է չվորոշված, հանգամանորեն չպարզված խնդրի գործնական ամբողջ բովանդակությունը: Այսինքըն պետք է կարողանալ գտնել «նվերներին» այն ձևը (և նրանց բաժանման այն պայմանները), վոր մենք տալիս ենք կոպերացման համար, վորի ոգնությունը մենք կարողանում ենք բավականաչափ նպաստել կոպերացիային և ձեռք բերել քաղաքակրթված կոպերատորներ: Իսկ արտադրության միջոցների հասարակական սեփականության և բուրժուազիայի վրա պրոլե-

տարիտառի տարած դասակարգային հաղթանակի ժամանակ քաղաքակրթված կոոպերատորների կազմը դառնում է սոցիալիզմի կազմ: Ամեն անգամ, յերբ յես սկսում եյի գրել նոր տնտեսական քաղաքականութեան մասին, յես մեջբերումներ եյի կատարում պետական կապիտալիզմի վերաբերյալ 1919 թվականին գրածս հոդվածից: Այդ հանգամանքը շատ անգամ կասկած է առաջ բերել մեր մի քանի յերէտասարդ ընկերների մեջ: Բայց նրանց այդ կասկածներն ուղղված եյին գլխավորապէս արտորակտ— քաղաքական խնդրի վրա:

Նրանց թշուով եր, թե չի կարելի պետական կապիտալիզմ անվանել այն կազմը, վորի արտադրութեան միջոցները և պետական իշխանութեանը պատկանում են բանվոր դասակարգին: Սակայն նրանք չեյին նկատում, վոր յես «պետական կապիտալիզմ» անունը գործ եյին ածում, առաջինը՝ պատեական կապ պահելու մեր ներկայիս դիրքի և այսպէս կոչված ձախ կոմունիստների հետ մղածս բանակումում իմ ընդունած դիրքի միջև. յես արդեն իսկ այն ժամանակ ապացուցել եմ, վոր պետական կապիտալիզմն ավելի գերադասելի կլիներ մեր ժամանակակից եկանոմիկայից: Ինձ համար կարևով եր հաջորդական կապ սահմանել սովորական պետական

կապիտալիզմի և այն արտասովոր, մինչև իսկ բոլորովին արտասովոր պետական կապիտալիզմի միջև, վորի մասին յես խոսել եմ, ծանոթացնելով ընթերցողին նոր տնտեսական քաղաքականութեանը: Յերկրորդ, ինձ համար միշտ ել կարևոր է յեղել գործնական նպատակը: Իսկ մեր նոր տնտեսական քաղաքականութեան գործնական նպատակը կոնցեսիաներ ստանալն եր. կոնցեսիաներն անկասկած, մեր ներկայիս պայմաններում կը կրնային պետական կապիտալիզմի գտարյուն տիպը: Ահա ինչ ձևով եյի պատկերացնում պետական կապիտալիզմի մասին յեղած կշռադատութեանները:

Անկասկած, կոոպերացիան պետութեան պայմաններում հանդիսանում է կոլեկտիվ կապիտալիստական հիմնարկութեան: Անկասկած է նույնպէս, վոր մեր ներկայիս տնտեսական իրականութեան պայմաններում, յերբ մենք միացնում ենք (բայց վոչ այլ կերպ, բան հասարակապատկան հողի վրա և բանվոր դասակարգին պատկանող պետական իշխանութեան հսկողութեան տակ) մասնավոր կապիտալիստական ձեռնարկութեանները հաջորդական սոցիալիստական ախլի ձեռնարկութեաններին (պետութեանն են պատկանում թե արտադրութեան միջոցները, թե հողը, վորի վրա շինված է ձեռնարկութեան

նր և թե ինքը ձեռնարկությունն իր ամբողջու-  
թյամբ), առաջ և գալիս յերրորդ տեսակի ձեռ-  
նարկություններ ևս ունենալու խնդիր, վորոնք  
առաջներում սկզբունքային տեսակետից ինք-  
նուրույն նշանակութուն չունեյին: Այդ յեր-  
րորդ տեսակը կոտպերատիվ ձեռնարկություն-  
ներն են: Մասնավոր կապիտալիզմի ժամանակ  
կոտպերատիվ ձեռնարկությունները տարբերվում  
են կապիտալիստական ձեռնարկություններից  
նրանով, վոր նորա կոլլեկտիվ ձեռնարկություն-  
ներ են, իսկ կապիտալիստականը — մասնավոր:  
Պետական կապիտալիզմի ժամանակ կոտպերա-  
տիվ ձեռնարկությունները տարբերվում են պե-  
տական-կապիտալիստականից առաջին՝ վորպես  
մասնավոր և յերկրորդ՝ վորպես կոլլեկտիվ ձեռ-  
նարկություններ: Մեր ներկայիս կարգերում  
կոտպերատիվ ձեռնարկությունները տարբեր-  
վում են մասնավոր-կապիտալիստականից, վոր-  
պես կոլլեկտիվ ձեռնարկություններ, սակայն  
սոցիալիստական ձեռնարկություններից նորա  
չեն կարող տարբերվել, յեթե հիմնված են այն  
ժամանակ, յերբ թե հողը, վորի վրա գտնվում  
են նորա և թե արտադրության միջոցները կադ-  
մում են պետության, այսինքն բանվոր դասա-  
կարգի սեփականությունը:

Ահա հենց այս հանգամանքն է, վոր մեզ

մոտ աչքաթող և արվում կոտպերացիայի մասին  
խոսելիս: Մոտանում են, վոր կոտպերացիան մեզ  
մոտ, շնորհիվ մեր պետական կազմի առանձնա-  
հատկության՝ ունի միանգամայն բացառիկ նշա-  
նակութուն: Յեթե մի կողմ դնելու լինենք  
կոնցեսիաները, վորոնք, ի դեպ և սակ, մեզ  
մոտ չկարողացան դարգանալ քիչ թե շատ, ապա  
պետք և սակ, վոր կոտպերացիան մեր պայման-  
ներում ըստ ամենայնի գուգադիպում և սոցիա-  
լիզմին:

Պարզեմ միտքս: Ինչու՞ն է կայանում հին  
կոտպերատորների ծրագրերի ցնորականությու-  
նը, սկսած Ռոբերտ Ռուենից: Նրանում, վոր  
նրանք յերազում եյին վերակազմել ժամանակա-  
կից հասարակութունը խաղաղ միջոցներով,  
առանց հաշվի առնելու այնպիսի մի հիմնական  
խնդիր, վորպիսին դասակարգային կռիվ, իշխա-  
նությունը բանվոր դասակարգի ձեռքով նվաճե-  
լու և շահագործող դասակարգի տիրապետութ-  
յունը ջախջախելու խնդիրն է: Այդ պատճառով  
մենք իրավացի յենք, յերբ այդ «կոտպերատի-  
վային» սոցիալիզմը լիովին ցնորք ենք համա-  
րում, յերբ ուսմանտիկ և անզամ գոեհիկ մի  
բան ենք համարում այն գաղափարները, վորոնց  
նպատակն ևր աղգարնակության հասարակ կո-  
պերացման միջոցով դասակարգային թշնամի-

1003  
1177



հերին գասակարգային աշխատակիցներ գար-  
ձընել, գասակարգային պատերազմը գասակարգա-  
յին համերաշխութեան (այսպէս կոչված քաղա-  
քացիական համերաշխութեան) վերածել:

Կոստած չկա, վոր մենք ժամանակի հիմնա-  
կան խնդրի տեսակետից իրավացի ելինք, վո-  
րովհետեւ առանց քաղաքական իշխանութեան հա-  
մար մղվող գասակարգային կռվի՝ սոցիալիզմը  
իրականանալ չի կարող:

Բայց տեսեք, թե ինչպէս է կերպարանա-  
փոխվել խնդիրը, յերբ իշխանութեանը գտնվում  
է արդեն բանվոր գասակարգի ձեռքին, յերբ  
շահագործողների քաղաքական իշխանութեանը  
տապալված է և յերբ արտադրութեան բոլոր  
միջոցների տերը հանդիսանում է բանվոր գա-  
սակարգը (բացի այն միջոցներից, վորոնք բան-  
վորական պետութեանը հոժարակամ հանձնում  
է շահագործողներին, ժամանակավորապէս և  
պայմանական կերպով, վորպէս կոնցեսիա):

Մենք այժմ իրավունք ունենք ասելու, վոր  
կոտորեացիայի սոսկական զարգացումը հավա-  
սարագոր է մեզ համար սոցիալիզմի զարգաց-  
ման (վերոհիշյալ «փոքրիկ» բացառութեամբ):  
Մրա հետ միատեսիլ մենք ստիպված ենք ընդու-  
նելու սոցիալիզմի վերաբերյալ մեր ունեցած  
ամբողջ տեսակետի արմատական փոփոխութեան

ներ: Այդ արմատական փոփոխութեանը կայա-  
նում է նրանում, վոր առաջներում ծանրու-  
թեան կենտրոնը մենք համարում ելինք և պետք  
է համարելինք քաղաքական կռիվը, այսինքն հե-  
ղափոխութեանը, իշխանութեան նվաճումը և  
այլն: Իսկ այժմ աշխատանքի ծանրութեան կեն-  
տրոնը տեղափոխվում է խաղաղ կազմակերպչա-  
կան «կուլտուրական» աշխատանքի վրա: Յետ  
կատեյի առորյա կուլտուրական աշխատանքի  
վրա, յեթէ սակայն գոյութեան չունենային մի-  
ջադրային հարաբերութեանները, յեթէ պարտա-  
դրված չլինեյինք մեր դիրքերի համար պա-  
շարելու միջադրային մաշտաբով: Բայց յեթէ դա  
մի կողմ թողնելու լինենք և սահմանափակվենք  
ներքին անտեսական հարաբերութեաններով՝ այդ  
դեպքում աշխատանքի ծանրութեան կենտրոնը  
խակապես վոր առորյա կուլտուրական գործը  
կը գտնուի:

Մեր առաջ ծառանում է դարաշրջան  
կազմող յերկու գլխավոր խնդիր: Դրանցից  
մեկը մեր ապագարատի վերակազմութեան խնդիրն  
է, մի ապագարատ, վորն ուղղակի բանի պետք չէ  
և մեզ ժառանգութեան է մնացել ամբողջապէս  
նախորդ դարաշրջանից: Մենք մեր պաշարի 5  
տարիներին ընթացքում այդ խնդրում լուրջ  
փոշինչ չկարողացանք և չեյինք ել կարող

անել: Յերկրորդ խնդիրը՝ գյուղացիութեան շրջանում կուլտուրական աշխատանքներ կատարելու խնդիրն է: Հենց այս կուլտուրական աշխատանքին էլ, փորպես տնտեսական նպատակ, հետամուտ է ինքը՝ կոոպերացումը: Յեթե կարողանայինք լիակատար կոոպերացում կատարել, մենք արդեն յերկու փոքրով կանգնած կըլինեյինք սոցիալիստական հողի վրա: Բայց լիակատար կոոպերացում կատարել անհնար է առանց գյուղացիութեան (փորպես խոշոր մասսայի) կուլտուրականութեան, առանց մի ամբողջ կուլտուրական հեղափոխութեան:

Մեր հակառակորդները մեզ շատ անգամ եյին ասում, թե մենք անմիա բան ենք բռնում, աշխատելով իրաւորձել սոցիալիզմը մի կուլտուրապես հետամնաց յերկրում: Բայց նոքա սխալվում եյին, փորովհետեւ մենք այնտեղից չսկսեցինք, փորակելից յենթադրվում եր սկսել ըստ ամեն կարգի պեղանաների տեսութեան. և հետո՝ մեզ մոտ քաղաքական և սոցիալական հեղաշրջումը նախորդեց այն կուլտուրական հեղափոխութեան, փորի հանդեպ մենք այնուամենայնիվ կանգնած ենք ներկայումս: Մեզ համար այժմ այդ կուլտուրական հեղափոխութեանն էլ բախական և լիակատար սոցիալիստական յերկիր լինելու համար, բայց մեզ համար

այդ կուլտուրական հեղափոխութեանը անասելի գծվարութեաններ և ներկայացնում թե կուլտուրական (փորովհետեւ մենք անգրագետ ենք) և թե նյութական տեսակետից, փորովհետեւ կուլտուրական դառնալու համար անհրաժեշտ է ունենալ արտադրութեան նյութական միջոցների փորոշ գարգացում, անհրաժեշտ է ունենալ փորոշ նյութական բազա:

«Պրավդա» № 115. 26 մայիսի, 1923 թ.

## ԿՈՌԴԵՐԱՅԻԱՆ ՅԵՎ ԴԵՏԱԿԱՆ ԿԱԴԻՅԱ- ԼԻԶԱ

(«Պարենհարկի մասին» բրուչուրից)

Վերցնենք կոոպերացիան: Ի դուր չե, վոր պարենհարկի գեկրեան անմիջապես առաջ բերեց կոոպերացիայի կանոնադրութեան վերաբրննութեան ու նրա «ազատութեանների» ու իրավունքների վորոշ ընդարձակումն: Կոոպերացիան ևս պետական կապիտալիզմի մի տեսակն է, բայց նա այնքան պարզ չե և վորոշակի դժված, այլ խճճված է և ուստի գործնական կյանքում մեր իշխանութեան առաջ մեծ դժվարութեաններ և հարուցանում: Մանր սպրանքաբաղադրոցները կոոպերացիան (խոսքը ալյուսեղ ալյու կոոպերացիայի մասին է և վոչ թե բանվորական կոոպերացիայի, վորովհետև նա սիպիկ գերակշռող ձևն է մանր դյուղացիական յերկրում) անխուսափելիորեն առաջ է բերում մանր բուրժուական կապիտալիստական հարաբերութեաններ, նպաստում է նրանց զարգաց-

ման, առաջ է քաշում մանր կապիտալիստներին և նրանց ամենամեծ ոգուար տալիս:

Այս ուրիշ կերպ լինել չի կարող, քանի վոր մանր անտեսատերերն ակներե կերպով գերակշռում են և գոյութեան ունի վոխանակութեան հնարավորութեան ու անհրաժեշտութեան: Կոոպերացիային ազատութեան և իրավունքներ տրվի Ռուսաստանի ներկայիս պայմաններում, միևնույն է՝ թե ազատութեան և իրավունքներ տրվի կապիտալիզմին: Այս ակներե ճշմարտութեան առաջ աչք գոցելը ախմարութեան և հանցանք կը լիներ:

Բայց «կոոպերատիվային» կապիտալիզմը տարբերվելով մասնավոր անտեսական կապիտալիզմից, հանդիսանում է կործարգային իշխանութեան ժամանակ պետական կապիտալիզմի մի ուրիշ տեսակը, և վորպես այդպիսին՝ մեզ համար նա վորոշ չափով ձեռնաույն է և ոգտակար: Վոր չափով պարենհարկը նշանակում է մնացյալ ավելցուկի (վորպես հարկ չգանձվող) վաճառման ազատութեան, նույնչափով մեզ անհրաժեշտ է ջանք գործ դնել կապիտալիզմի այդ զարգացումը (վաճառքի, առևարի ազատութեանը կապիտալիզմի զարգացումն է) ուղղելու գեպի կոոպերատիվային կապիտալիզմի հունը: Կոոպերատիվային կապիտալիզմը նման է պետա-

կան կապիտալիզմին այն տեսակետից, Վոր թե-  
թեկացնում է հաշվառումը, հսկողութունը, ստու-  
գությունը, պայմանական հարաբերությունները  
պետութեան (Նորհրդային) և կապիտալիստի  
միջև: Կոոպերացիան, վորպես առետրի մի ձև,  
ավելի ձեռնտու յե և ոգտակար, քան մասնա-  
վոր առևտուրը, վոչ միայն վերոհիշյալ պատ-  
ճառներով, այլ և այն պատճառով, վոր նա  
հեշտացնում է միություններ կազմելը, միլիո-  
նավոր ազգաբնակչության և ապա գլխովին ամ-  
բողջ ազգաբնակչության կազմակերպման գործը:  
Այս հանդամանքն իր հերթին մի հսկայական  
պլյուս է պետական կապիտալիզմից դեպի սո-  
ցիալիզմ անցնելու տեսակետից:

Համեմատենք կոնցեսիան և կոոպերացիան,  
վորպես պետական կապիտալիզմի ձևեր: Կոն-  
ցեսիան հիմնվում է խոշոր մեքենական ար-  
դյունաբերության վրա, իսկ կոոպերացիան—  
մանր, ձեռքի, մասամբ նույն իսկ նահապետա-  
կան արդյունաբերության վրա: Կոնցեսիան կապ  
ունի մեկ կապիտալիստի կամ մեկ ֆիրմայի,  
սինդիկատի, արտելի, արեստի հետ, յուրաքան-  
չյուր առանձին կոնցեսիոն պայմանագրի հիման  
վրա: Կոոպերացիան՝ ընդգրկում է բազմահազար,  
անգամ միլիոնավոր մանր տնտեսատերերի: Կոն-  
ցեսիան թույլ է տալիս և անգամ անհրաժեշտ և

համարում ստույգ պայմանագիրն ու ստույգ  
ժամանակամիջոցը: Կոոպերացիան թույլ չի տա-  
լիս վոչ լիովին ստույգ պայմանագիր և վոչ ել  
ստույգ ժամանակամիջոց: Կոոպերացիայի որեն-  
քը վերացնել ավելի հեշտ է, քան թե կոնցես-  
սիայի մասին յեղած պայմանագիրը: Վերջինս  
վերացնել, նշանակում է միանգամից, ուղղակի  
և անմիջապես խլել տնտեսական միութեան կամ  
տնտեսական «կենսակցութեան» փաստական հա-  
րաբերությունները կապիտալիզմի հետ: Մինչ-  
քեռ կոոպերացիայի մասին յեղած որենքների  
վերացումը վոչ միայն միանգամից չի խզում Նոր-  
հրդային իշխանութեան փաստական «կենսակցու-  
թյունը» մանր կապիտալիստների հետ, այլ և  
ընդհանրապես անկարող են խզել փաստական  
տնտեսական հարաբերությունները: Կոնցեսիո-  
ններին «հետևել» հեշտ է, իսկ կոոպերատորին՝  
դժվար: Կոնցեսիաներից սոցիալիզմին անցնելը  
խոշոր արտադրութեան մի ձևից մի այլն ձևին  
անցնել է: Մանր տնտեսատերերի կոոպերացիա-  
սից դեպի սոցիալիզմ անցնելը մանր արտադրու-  
թյունից դեպի խոշորն անցնել է: Այդ անցումն  
ավելի բարդ է, բայց և այնպես ընդունակ է  
ընդգրկելու, հաջողութեան դեպքում, ազգաբնա-  
կչության ավելի ընդարձակ մաստաներ, ընդու-  
նակ և պոկելու հին, նախասոցիալիստական, ան-

զամ նախակապիտալիստական հարաբերությունների ավելի խորունկ և կենդանի արձատսերը, վորոնք հակառակ են ամենատեսակ «նորմալ-ծությունների»:

Կոնցեսիաների քաղաքականությունը, հաշտ-դության զեպքում, մեզ կարող է սալ սակալ քանակությամբ որինակելի (մեր ունեյածների հետ համեմատած) խոշոր ձեռնարկություններ, վորոնք կանգնած կը լինեն ժամանակակից առաջնակարգ կապիտալիզմի մակարդակի վրա-մի քանի տասնյակ տարիներից հետո այդ ձեռ-նարկություններն ամբողջովին կանցնեն մեր ձեռքը: Կոոպերատիվային քաղաքականությունը հաշտության զեպքում, կը բարձրացնի մանր անտեսությունը և անորոշ ժամանակով կը թե-թեացնի նրա անցումը խոշոր արտադրության՝ կամովին միության հիմունքներով:

(Աշխ. ժողովածու, հատոր XVIII յերևա 218-220):

## ԿՈՈՊԵՐԱՏԻՎՆԵՐԸ ՎՈՐՊԵՍ ԱՆՎՐԱԺԵՑ ԱՊՊՍՐԱՅ

(1918 թ. գեկտ. 19-ին ժող. ՏՅՏ. Խոհրդի 2-րդ Հա-մառուսական համագումարում արտասանած ճառից):

Ինչ վերաբերում է կոոպերատիվներին, նրանց ևս անհրաժեշտ է մոտենալ զորձնական տեսակետից: Յերբ յես տեսնում եմ ժող. անա-խորհուրդների անգամներին այստեղ հայտարա-րելիս, թե կոոպերացիան խանութի գործ է, թե այնտեղ մենշեիկներն ու սպիտակ գվարդիական-ներն են նստած և հեռապես նրանցից պետք է հեռու մնալ, — յես սսում եմ, վոր այդ մար-դիկ ցույց են տալիս իրենց անտեղյակությու-նը: Նոքա բացարձակապես չեն հասկանում մո-մենտի խնդիրները: Փոխանակ ցույց տալու պիտանի մասնագետ կոոպերատորներին, այս վերջիններին մասնանշում են վորպես սպիտակ գվարդիականներին ձեռք մեկնողներին: Յես պնդում եմ, վոր նոքա իրենց գործով չեն զբաղ-վում: Սպիտակ գվարդիականներին վորսալու համար մենք ունենք արտակարգ հանձնաժողով-



ներ, վորոնց և պետք է թողնել կատարելու իրենց գործը: Կոտպերատիվը իմպերիալիստական հասարակութեան կողմից ստեղծված միակ ապարատն է, վորը մենք պետք է ոգտագործենք:

Այդ պատճառով յուրաքանչյուր վորձ, վոր ուղղված կը լինի գործը փոխարինելու կարճատես, բթամիտ և ինտելլիգենտական մեծամտութիւն պարունակող քննադատութիւններով մենք կը հալածենք զինվորական գրութիւնից բղխող անողոք բեպրեսիաների միջոցով:

Յեթե մինչև այժմ, մի տարի արդեն անցնելուց հետո, գործը կարգի չի բերված ինչպես պետքն է, յերբ մեր առաջ կանգնած պրակտիկ խնդիրները տեսնելով, մենք այնուամենայնիվ շարունակում ենք ծրագիրը վորոճալ, իսկ յերկիրը պահանջում է հաց, կոշիկ, հում նյութերի ժամանակին բաշխում՝ նման ձգձգումները և ուրիշների գործին խառնվելը չի կարելի այլևս հանդուրժել:

Մեր ապարատների մոտ յերբեմն կանգնում են այնպիսի տարրեր, վորոնք հակված են գեպի սպիտակ գվարդիականները, բայց յերբ մեր բոլոր հիմնարկութիւններում գոյութիւն ունի կոմունիստական հակողութիւն, այդ մարդիկ քաղաքական նշանակութիւն ու զեկապարող զեր

ունենալ անկարող են: Դրա մասին խոսք լինել չի կարող: Նրանք մեզ պետք են, վորպես պրակտիկ աշխատողներ և հետևապես նրանցից չպետք է վախենալ:

Յես չեմ կասկածում, վոր կոմունիստները հիանալի մարդիկ են, նրանց մեջ կան շատ լավ կազմակերպիչներ, բայց վորպեսզի այդպիսի կազմակերպիչներ կարողանանք ունենալ մեծ թիվով, մեզ պետք են տարիներ, իսկ մենք սպասել չենք կարող:

Ներկայումս մենք կարող ենք այդպիսի աշխատողներ ձեռք բերել բուրժուազիայի միջից, մասնագետների և ինտելլիգենցիայի շարքերից: Յեւ մենք պետք է հարցնենք ժող. սնտ. խորհրդում աշխատող յուրաքանչյուր ընկերոջ՝ ի՞նչ եք արել դուք, պարոններ, նրա համար, վորպեսզի աշխատանքի մեջ քաշեք փորձառու մարդկանց, մասնագետներին, գործակատարներին, գործունյա բուրժուական կոտպերատորներին, վորոնք ձեզ մոտ պետք է աշխատեն վոչ վատ, քան նոքա աշխատում էյին ինչ-վոր Կոլուպայեվների կամ Բազուկայեվների մոտ: Ժամանակն է, վոր մենք հրաժարվենք նախկին նախապաշարումներից և աշխատանքի կոչենք բոլոր մեզ համար պիտանի մասնագետներին: Սա պետք է զխենան մեր բոլոր կոլեգիալ վար-

չությունները, մեր կոմմունիստ գործիչները: Գործի հանդեպ ունեցած նման վերաբերմունքի մեջ և մեր հաջողության յերաշխիքը:

Բովական և ամեն տեսակի պարտոյ խոսակցությունները, յեկել և պրակտիկ գործի անցնելու ժամանակը, վորը և կարող և մեր յերկիրը դուրս բերել այն շրջանից, վորի մեջ նրան փակել են իմ պերիպիստները: Այս տեսակետին պետք և կանգնեն բոլոր խորհրդադային և կոոպերատիվային ասոցիացիաները: Մեզ պետք և կատարել գործ և միայն գործ: Յեթե պրոլետարիատն իր ձեռքն առնելով իշխանությունը՝ չի կարողանում ոգավել նրանից, չի կարողանում ինդիլոր դնել պրակտիկ կերպով և պրակտիկ կերպով ել վճռել՝ նա չափազանց շատ բան և կորցնում դրանից: Ժամանակ և թողնել այն նախապաշարմունքը, թե իբր միայն կոմմունիստները (վորոնց մեջ, անկասկած, կան և չափազանց բավ մարդիկ) կարող են տանել վորոշ աշխատանք: Ժամանակ և, վոր մենք թողնենք այդ նախապաշարմունքը: Մեզ հարկավոր են գործի և միայն գործի մարդիկ և մենք պարտավոր ենք բոլոր այգպիսիներին քաշել աշխատանքի: Կապիտալիզմը մեզ հսկայական ժառանգություն և թողել, նա թողել և մեզ իր խոշոր մասնագետներին, վորոնցից մենք անպայմանորեն

պետք և ոգավենք ընդարձակ, մասսայական չափերով, նրանց բոլորին աշխատանքի լծելով:

Մենք այնքան ժամանակ չունենք, վորպեսզի մեր կոմմունիստներից մասնագետները պատրաստելու համար ժամանակ վատնենք, վորովհետև այժմ ամբողջ գործը պրակտիկ աշխատանքի, պրակտիկ հետևանքների մեջ և կայանում:

Պետք և հարցն այնպես դնել, վոր կոլեկտիվայի յուրաքանչյուր անդամ, սլատասխանատու հիմնարկության յուրաքանչյուր աշխատակից իր ձեռքը հավաքի գործը, իր վրա առնելով թե արտադրության և թե բաշխման ամբողջ պատասխանատվությունը: Յես ձեզ պետք և սանձ, վոր մեր Խորհրդային Հանրապետության դրությունն այնպես և, վոր յեթե մենք հացը և այլ մթերքները կարողանանք բաշխել խելացի կերպով, մենք կարող կը վինենք գիմանալ շատ և շատ յերկար: Բայց դրա համար անհրաժեշտ և վարել խելացի քաղաքականություն, ամեն տեսակի ձգձգումներից կտրականապես ձեռք քաշելու քաղաքականություն. անհրաժեշտ և գործել արագ և վճռական կերպով, անհրաժեշտ և նշանակել վորոշ մարդկանց վորոշ պատասխանատու աշխատանքների, անհրաժեշտ և, վոր այդ անձնավորություններից յուրաքանչյուրը վորոշակի ճանաչի իր գոր-

ծր, պատասխանատու լինի նրա համար մինչև  
գնդակահարութիւնն: Ահա այն քաղաքականու-  
թիւնը, վոր մենք տանում ենք թե ժող. կոմ-  
Սոբոլըղում, և թե Պաշտպանութեան Խորհրդում:  
Յեւ անհրաժեշտ է այդ քաղաքականութեանը  
յենթարկել ժող. տնտ. խորհուրդներին և կոոպե-  
րատիւններին ամբողջ գործունեութիւնը:

Ահա այն ուղին, վորով պետք է ընթանա  
պրոլետարիատի քաղաքականութիւնը:

Խնդիրն այնպես պետք է դնել, վոր մեզ  
մոտ կանոնախոր կերպով պատել կարողանա  
ապրանքափոխանակութեան անխփր: Այժմ տմ-  
բողջ գործը դրա մեջ է: Այդ ասպարիզում մենք  
մեծ աշխատանք ունենք կատարելու և յետ ինձ  
թույլ եմ տալիս, ի յեզրափակումն իմ հիմնկվա  
ասածներին, ձեզ դեպի այդ աշխատանքը կոչելու:

(Աշխ. ժող., հատոր XV յերես 603-605),

## ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՑԻԱՅԻ ՄԱՍԻՆ

(ձառ. արտասանված 1918 թ. դեկտ. 7-ին բանվորա-  
կան կոոպերացիայի յերոզգ համագումարում).

Ընկերներ, բանվորական կոոպերացիայի  
առաջ, տնտեսական և քաղաքական ասպարեզ-  
ներում, կանոնաձեռն է ներկայումս մի չափազանց  
կարեւոր խնդիր: Թե մեկ և թե մյուս ասպա-  
րեզներին վերաբերող խնդիրներն այժմ պարզ և  
անփակտելի կերպով միացած են իրար, տնտե-  
սական և քաղաքական պայքարի շրջանակում:  
Ինչ վերաբերում է կոոպերացիայի մերձակա  
խնդիրներին՝ յետ կամենում եմ ընդգծել «կո-  
ոպերացիայի հետ համաձայնողականութեան»  
նշանակութիւնը: Այն համաձայնողականութիւ-  
նը, վորի մասին այնքան շատ է խոսվել վերջին  
ժամանակներս մամուլում, եյապես տարբեր-  
վում է բուրժուազիայի հետ յեղած համաձայնո-  
ղականութեան հասկացողութիւնից, վորը մի  
զավաճանութիւն է: Այն համաձայնողականու-  
թիւնը, վորի մասին մենք այժմ խոսում ենք,  
միանգամայն տարբեր տեսակի համաձայնողա-  
կանութիւն է: Հսկայական տարբերութիւն

գոյութիւնն ունի Գերմանիայի հետ Խորհրդային կառավարութեան կնքած համաձայնողականութեան և յերկրի համար վնասակար ու կործանարար այն համաձայնողականութեան միջև, վոր բանվոր դասակարգը կապում է բուրժուազիայի հետ: Յես խոսում եմ ինչպես դասակարգային կռիւի, նույնպես և սոցիալիզմի հիմնական սկզբունքների հանդեպ յեղած այն կատարյալ գափաճանութեան մասին, վոր թագնւած է այդ համաձայնողականութեան տակ: Այն սոցիալիստները, վորոնք իրենց վորոշ նպատակ են դրել կռվել բուրժուազիայի և կապիտալի դեմ՝ ինքն ըստ ինքեան հասկանում են այս տարբերութիւնը:

Մեն ամենքս շատ լավ հասկանում ենք, վոր մեր դասակարգային կռիւի համար կարող է մեկ միասնական վճիռ միայն լինել՝ կամ ճանաչել կապիտալի իշխանութիւնը և կամ թե բանվոր դասակարգի իշխանութիւնը: Մենք գիտենք, վոր մանր բուրժուական կուսակցութիւնների բոլոր փորձերը՝ ստեղծելու և կիրարկելու յերկրում սեփական քաղաքականութիւն՝ կանխապես լիակատար անհաջողութեան են դատարարուած: Մենք պարզ կերպով տեսանք, ապրեցինք այս կամ այն մանր բուրժուական կուսակցութիւնների կամ խմբակների մի շարք

փորձերը, վորոնք կամենում էինք կիրարկել իրենց քաղաքականութիւնը և մենք համոզվե ենք, վոր նման միջանկյալ փորձերը պետք է անհաջողութիւնն կրեն: Վորոշ պայմանների հետևանքով, բոլորովին հակառակ բեկումներում կանգնած միայն յերկու կենտրոնական ուժերը կարող են իշխել Ռուսաստանում, կարող են շրջել նրա ճակատագիրը այս կամ այն կողմը: Յես նույն իսկ ավելին կասեմ, — ամբողջ աշխարհը ստեղծվում է և կառավարվում այս կենտրոնական ուժերից մեկի կամ մյուսի ձեռքով: Ինչ վերաբերում է Ռուսաստանին՝ վորոշակի կարելի չէ ասել, վոր այդ ուժերից միայն մեկը կարող է անցնել շարժման գլուխ, կյանքի այս կամ այն տնտեսական պայմանների հեռանկարով: Մնացած միջանկյալ ուժերը (թեպետ և շատ) յերբեք չեն կարող շնորհակալ լսողալ յերկրի կյանքում:

Ներկա մոմենտում Խորհրդային իշխանութեան առաջ պետք է դրվի կոոպերացիան Խորհրդային իշխանութեան հետ համաձայնեցնելու խնդիրը: Ապրիլ ամսում մենք նահանջեցինք մեր կանխագծւած նպատակներից և գիշումներ արեցինք: Ի հարկէ, մի յերկրում, ուր վոչնչանում են բոլոր դասակարգերը, դասակարգային կոոպերացիա չպետք է գոյութիւնն ունենա:

Բայց յես կրկնում եմ, վոր ժամանակի պայ-  
մանները պահանջում եյին վորոշ հետաձգում և  
մենք այդ արեցինք, ձգձգելով մի բանի ամիս:  
Բայց այնուամենայնիվ մենք ամենքս գիտենք,  
վոր յերկրի իշխանութիւնն իր այժմյան զիր-  
քերից յերբեք չի դուրս գա:

Մենք այդ զիջումը պետք է անեյինք, վո-  
րովհետեւ մենք այդ ժամանակ ամբողջ աշխար-  
հում մենակ եյինք մնացել և մեր զիջումը բա-  
ցատրվում է մեր աշխատանքի ծանրութեամբ:  
Պրոլետարիատի վրա ընկած տնտեսական խըն-  
դիրները մեզ ստիպեցին հաշտեցնել և պահպա-  
նել մանր բուրժուական խավերի վորոշ սովորու-  
թիւնները: Այստեղ գլխավոր խոսքն այն մա-  
սին է, վոր ինչ ճանապարհով ել ուզում է լի-  
նի, պետք է ուղղութիւն տալ և համաձայնե-  
ցնել աշխատավորութեան և շահագործիչների  
ամբողջ մասսայի գործունեութիւնը: Մենք բո-  
լոր ժամանակ պետք է հիշենք, թե ինչ է  
պահանջում մեզնից պրոլետարիատը: Ժողովրդ-  
ական իշխանութիւնը պարտավոր է հաշիւ առ-  
նել, վոր մանր բուրժուազիայի տարբեր խա-  
վերը պետք է միանան բանվոր դասակարգի հետ  
ավելի և ավելի մեծ թափով, յերբ կյանքը վերջ  
իվերջո ցույց կըտա, վոր այլ ճանապարհ չկա, վոր  
յերկրի պետական կյանքի խնդիրների միջին

լուծման բոլոր հույսերը վերջնականապես խոր-  
տակիված են: Ժողովրդական կամքի, Մանմանտ-  
դէր ժողովի և բոլոր այլ գեղեցիկ լոզունգները,  
վորոնցով սքողվում եյին բոլոր կիսամիջոցները,  
իսկույն վոչնչացան, յերբ սկսեց խոսել իսկական  
ժողովրդական կամքը: Դուք ինքներդ տեսաք,  
թե ինչ տեղի ունեցավ, թե ինչպէս կիսամիջոց-  
ների այս բոլոր լոզունգները ցաք ու ցրիվ դար-  
ձան: Ներկա մոմենտում մենք տեսնում ենք,  
վոր այդ տեղի յե ունենում վոչ միայն Ռու-  
սաստանում, այլ և համաշխարհային մարտաբով:

Յես կամենում եմ պարզել տարբերութիւնը  
յերկու համաձայնողականութիւնների միջև,  
վորոնցից մեկը առաջ բերեց այնպիսի սոսկալի  
աաեղութիւն ամբողջ բանվոր դասակարգի մեջ,  
իսկ մյուսը, վորը մենք ենք պահանջում, այն  
է՝ համաձայնութիւն ամբողջ մանր գյուղացիու-  
թեան և մանր բուրժուազիայի հետ. Իրեստի  
հաշտութեան ժամանակ, յերբ մենք ընդունեցինք  
այդ հաշտութեան ծանր պայմանները, մեզ ա-  
սում եյին, վոր համաշխարհային հեղափոխու-  
թեան վրա հույս չկա և չի կարող լինել: Մենք  
մնացել եյինք բոլովովին միայնակ ամբողջ աշխար-  
հում: Հայտնի յե, վոր կուսակցութիւններից  
շատերն այդ ժամանակ՝ Իրեստի հաշտութեան  
շնորհիվ հեռացան մեզնից և անցան բուրժուա-

զիայի կողմը: Այս մոմենտում մենք մի ամբողջ շարք սոսկալի ապրումներ ունեցանք: Իրանից մի քանի ամիս հետո կյանքը ցույց տվեց, վոր այլ ճանապարհ չկա և չի կարող լինել, վոր միջին ընտրությունն զոյությունն չունի:

Յերբ տեղի ունեցավ Գերմանական հեղափոխությունը, բոլորի համար պարզվեց, վոր հեղափոխությունը սկսվում է ամբողջ աշխարհում, վոր Անգլիան, Ֆրանսիան և Ամերիկան նոյնպես գնում են դեպի Յեղափոխություն տանող ճանապարհով—մեր ճանապարհով:

Յերբ մեր մանր բուրժուազիայի գեմոկրատական խավերը գնում էլին իրենց ղեկավարների յետեից, նոքա չգիտեյին, թե ուր յեն տանում իրենց, չգիտեյին, վոր իրենց տանում են կապիտալիզմի ճանապարհով: Այժմ մենք Գերմանական հեղափոխության որինակից տեսնում ենք, վոր գեմոկրատիայի այդ ներկայացուցիչները, նրա այդ պաշտպանները, պարոնայք Վիլսոնները և կամպանիան, իրենց գաշինքներն են փաթաթում հաղթված ժողովուրդի շինքին և ավելի վատթար ձևով, քան Բրեստի դաշինքը, վոր փաթաթեցին մեր վզին: Մենք այժմ պարզ տեսնում ենք, վոր արևմուտքում տեղի ունեցող ղեպքերի և սխտուացիայի փոփոխության հետևանքով միջազգային դեմագոգիայի վերջը հասել է: Այժմ

վորոշ կերպով պարզվել է յուրաքանչյուր ազգի դեմքը: Այժմ դիմակները պատռված են և շախշախված բոլոր իլյուզիաները համաշխարհային հեղափոխության ծանր տապարով:

Բնական է, վոր նման տատանվող տարրերի գոյության ժամանակ, վորպիսիք միշտ էլ լինում են անցողական ժամանակներում, Խորհրդային իշխանությունը պետք է ոգտագործի իր ամբողջ նշանակությունը և ազդեցությունը կիրարկելու համար կյանքի մեջ այն խնդիրները, վոր մենք գնում ենք այժմ և վորոնցով մենք պաշտպանում ենք մեր սպրիլին սկսած քաղաքականությունը: Մենք այն ժամանակ հետաձգեցինք մեր մտադրած նպատակները վորոշ ժամանակով, այն ժամանակ մենք գիտակցաբար և բացահայտ կերպով կատարեցինք մի շարք զիջումներ:

Այստեղ հարց հարուցվեց այն մասին, թե մենք ճանապարհի վոր կետի վրա յենք գրտնվում այժմ: Այժմ ամբողջ Յեվրոպան վորոշ կերպով տեսնում է, վոր մեր հեղափոխության գլխին այլևս վոշ մի փորձ չի կատարվում և ուստի քաղաքակիրթ ժողովուրդների վերաբերմունքը դեպի մեզ սկսում է փոխվել: Նոքա հասկացան, վոր այդ մտքով մենք մի նոր նրակայական գործ ենք կատարում, վոր այդ գործը մեզ համար առանձնապես դժվար է, վորովհետև

գրեթե ամբողջ ժամանակ մենք յեղել ենք բոլորովին միայնակ և մոռացված միջազգային պրոլետարիատի կողմից: Այդ պատճառով մենք կատարել ենք շատ լուրջ սխալներ, վորոնք մենք ամենևին չենք թազցնում: Իհարկ և, մենք պետքե ձգտելինք միացնել ամբողջ ազգաբնակիւթյունը, չպետք և առաջ բերելինք վորևե զժառություն: Յեթե մենք այդ չենք արել մինչև որս, պարտավոր ենք յերբեկցել սկսելու այդ: Մենք արդեն շատ կազմակերպություններ միացրել ենք իրար: Այժմ պետք և միացնել բանվորական կոոպերացիան Խորհրդային կազմակերպություններին: Այս տարվա\*) ապրիլ ամսից մենք սկսել ենք կազմակերպել, վորպեսզի սկսենք գործել վորձի միջոցով, վորպեսզի գործադրենք կյանքում հասարակական և բազաքական ուժերի այն կուտակումը, վորը կա մեզ մոտ: Մենք սկսել ենք կազմակերպել առարկաների մատակարարությունը և բաշխումը ամբողջ ազգաբնակիւթյան միջև: Մեր յուրաքանչյուր քայլը ստուգելով, մենք ձեռնարկել ենք այդ կազմակերպության աշխատանքներին, վորը առանձնապես զժվար և իրագործել մեր անտեսապես հետամնաց յերկրում: Կոոպերացիայի հետ

\*) Այսինքն՝ 1918 թվականի.

համաձայնությունը մենք սկսել ենք առաջ բերել ապրիլ ամսից: Այն զեկրետը, վորը հրատարակվել և մատակարարումն ու բաշխումը լիովին միացնելու և կազմակերպելու վասին, ունի նույն նպատակը: Մենք գիտենք, վոր այն շրջումները, վորոնց մասին հիշեց հաջորդ հոետորն իր ձատում, որինակ բերելով Պետերբուրգը, գոյություն ունի գրեթե ամենուրեք: Մենք այդ շրջումները միանգամայն անխուսափելի յենք համարում, վորովհետև գալիս և մի մոմենտ, յերբ մտանում են և միանում իրար յերկու բոլորովին տարբեր ապարատներ, այդ անխուսափելի յե և գրանավ մենք պետքե անցնենք: Ճիշտ նույն կերպ դուք ևս պետք և հասկանաք, վոր բանվորական կոոպերացիայի այդքան յերկար բնդիմությունը վերջ ի վերջն առաջ բերեց դեպի իրեն միանգամայն արդարացի անվտանգություն Խորհրդային իշխանության կողմից: Գուք ասում եք՝ մենք կամենում ենք անկախ լինել:

Միանգամայն բնական և, վոր նման լոգունգ հրապարակ հանողը կարող և առաջ բերել անվտանգություն: Յեթե կամենում են շրջումներից ազատվել, նախ և առաջ պետք և ձեռք քաշեն անկախ լինելու գաղափարից, վորովհետև ով կանգնած և նման տեսակետի վրա՝ նա արդեն հանդիսանում և Խորհրդային իշխանության

հակառակորդ այն ժամանակ, յեբք ամենքը ձրգտում են սերտ միացման: Հենց վոր բանվորական կոոպերացիան սկսի միանգամայն պարզ և անկեղծ կերպով միանալ Սորհրդային իշխանությանը, այդ շփումներն ևս կըսկսեն վերանալ: Յես շատ լավ գիտեմ, վոր յերբ յերկու խմբակներ միանում են իրար՝ սկզբում աշխատանքի մեջ առաջ են դալիս վորոշ անհարթություններ, բայց ժամանակի ընթացքում ստեղծվում է փոխադարձ փոտահություն և այդ բոլոր շփումներն աստիճանաբար վերանում են: Մինչդեռ յեթե այդ յերկու խմբակները շարունակեն մնալ բաժանված՝ մշտապես միջվարչական շփումներ կարող են սեղի ունենալ: Յես մի բան չեմ հասկանում, թե ինչ գործ ունի այստեղ «անկախ» լինելը: Չե՞ վոր մենք կանդնած ենք այն տեսակետին, վոր ամբողջ հասարակությունը, թե մատակարարման և թե բաշխման տեսակետից պետք է ներկայացնի իրենից մի ընդհանուր կոոպերատիվ: Մենք բոլորս այն տեսակետին ենք, վոր կոոպերացիան սոցիալիստական կուսակցության նվաճումներից մեկն է: Կապիտալիզմը դիտավորյալ կերպով բաժանում է ազգաբնակչության խավերին իրարից: Այս բաժանումը մեզ մոտ պետք է չքանա վերջնականապես և անհետադարձ կերպով: Ամբողջ հասարակությունը

պետք է դառնա աշխատավորների մի միասնական կոոպերատիվ: Առանձին խմբակների վորեւն անկախության մասին չի կարող և չըպետք է խոսք լինի:

Այդպիսի կոոպերատիվի մասին յես նոր խոսեցի, համարելով այն վորպես սոցրալիզմի հաղթության մի խնդիր: Ահա թե մենք ինչու ենք ասում, վոր ինչպիսին ել լինի մեր անհամաձայնությունը մասնավոր խնդիրների վերաբերյալ, մենք կապիտալիզմի հետ վոչ մի համաձայնություն չենք կնքի, մենք մի քայլ անգամ չենք անի, վորը մեզ կըհետացներ մեր հաղթանակի սկզբունքներից: Այն համաձայնությունը, վորը մենք պատրաստ ենք կայացնելու հասարակական դասակարգերի միջնաշերտերի հետ՝ չպետք է համարվի համաձայնություն բուրժուազիայի և վոչ ել կապիտալիզմի հետ: Այդ համաձայնությունը պրոլետարիատի առանձին խմբերի և դեմոկրատիայի միջև կայացող համաձայնություն է: Այդպիսի համաձայնությունից չպետք է վախենալ, վորովհետև այդ խավերի մեջ գոյություն ունեցող բոլոր դժտությունները պետք է անհետանան բոլորովին հեղափոխական հնոցում:

Ներկայումս մեկ բան է պետք—մի միաբան ձգտում՝ յերթալու բաց սրտով դեպի այդ միասնական համաշխարհային կոոպերատիվը:



Այն ինչ արել է Խորհրդային Իշխանութիւնը և այն՝ ինչ արել են մինչև որս կոոպերացիաները՝ պետք է միացվեն իրար: Այդպես է Խորհրդային Իշխանութեան վերջին ղեկընդիմումները: Այն հակայական գործը, վոր կատարել է կոոպերացիան, պետք է անպատճառ միացվի այն հակայական գործին, վոր կատարել է Խորհրդային Իշխանութիւնը: Հասարակութեան բոլոր խավերը, վորոնք կալում են իրենց ազգատութեան համար, պետք է միանան մի կուսակազմակերպութեան մեջ: Մենք գիտենք, վոր շատ սխալներ ենք կատարել, հատկապես Հոկտեմբերյան հեղափոխութեան առաջին ամիսներում: Բայց այսուհետև մենք ձգտելու չենք, վոր ազգաբնակչութեան մեջ լինի կատարյալ միութիւն և համաձայնութիւն: Իսկ դրա համար անհրաժեշտ է, վոր ամեն ինչ յենթարկվի Խորհրդային Իշխանութեան, անհրաժեշտ է, վոր բոլոր իշխողները, ինչպես առանձին խավերի, նույնպես և բանվորական կոոպերացիայի ինչ-վոր «անկախութեան» մասին՝ վորչափ կարելի չէ, շուտ ջջանան: «Անկախութեան» այդ հույսը կարող է գոյութիւն ունենալ միայն այնպէս, վորտեղ տակաւին կարող է լինել վերադարձի վորևէ հույս դեպի հինը:

Սկզբներում արևմտյան ժողովուրդները

նայում էին մեզ և մեր հեղափոխական շարժումներին վրա վորպէս կուրյոզի: Նորա ստում էին. «Թող ժողովուրդը շարաճճիութեաններ անի, իսկ մենք կը դիտենք, թէ ինչ գուրս կը դա այդ ամենից... Այդ տարրինակ ուս ժողովուրդից»...

Ահա այդ տարրինակ ուս ժողովուրդը ցույց տվեց ամբողջ աշխարհին, թէ ինչ է նշանակում իր «շարաճճիութիւնը»: Ներկայումս, յերբ մոտեցել է գերմանական հեղափոխութեան սկիզբը, ոտարյերկրյա հյուպատոսներին մեկնատել է Զինովեին. «Դեռ ևս անհայտ է, թէ սվ է ավելի շատ ոգտագործել Բրեստի հաշտութիւնը՝ դուր թէ մենք»: Նա այդ ասել է, վորովհետև բոլորը նույնն են ստում: Բոլորը տեսնում էին, վոր դա միայն համաշխարհային Մեծ Հեղափոխութեան սկիզբն է:

Մեծ Հեղափոխութեան այդ սկիզբը դրինք մենք, դրել է հետամնաց, տարրինակ ուս ժողովուրդը: Պետք է ասել, վոր պատմութիւնը ընթանում է տարրինակ ուղիներով, մի հետամնաց յերկրի պատիվ է բաժին բնկել ընթանալու համաշխարհային մեծ շարժման զլուխ անցած: Այս շարժումը տեսնում է և հասկանում ամբողջ աշխարհի բուրժուազիան:

Այս հրդեհով բռնված է Գերմանիան, Բելգիան, Շվեյցարիան, Հոլլանդիան...

Որեց-որ սկսում է ավելի և ավելի ուժեղ ծավալվել այս շարժումը. գրա հետ աճում է և ամբանում Խորհրդային Հեղափոխական Կառավարութունը: Այդ պատճառով բուրժուազիան այժմ բոլորովին փոխել է իր վերաբերմունքը դեպի խնդիրները: Այդ պատճառով առանձին կուսակցութունների անկախության մասին վոչ մի խոսք լինել չի կարող այն ժամանակ, յերբ համաշխարհային կացինը ճոճում է կապիտալիզմի գլխին: Ամենամեծ որինակը տալիս է Ամերիկան: Ամերիկան մեկն է ամենադեմոկրատական յերկրներից: Նա մի հսկայական դեմոկրատական սոցիալական հանրապետութուն է: Հապա ել վորտեղ, յեթե վոչ միայն այդ յերկրում, վորն ունի ընարական բոլոր իրավունքները, ազատ պետության բոլոր իրավունքները, պետք է վոր ըննվեն բոլոր իրավական խնդիրները:

Բայց ինչպես են վարվում Վիլսոնները հաղթված Գերմանիայի հետ: Ահա ինչ ձևով են բացվում մեր առաջ համաշխարհային հարաբերութունների պատկերները: Այդ պատկերները, վորոնցից մենք քաղում ենք պարոնայք Վիլսոնների իրենց բարեկամներին արած առաջարկների բովանդատ-

կությունը՝ միլիոն և տրիլիոն անգամ ավելի համոզեցուցիչ են: Վիլսոնները մեր գործերը վայրկենապես կը հասցնեյին իրենց վախճանին: Այդ պարոնները, այդ ազատ միլիարդերները, այդ ամբողջ աշխարհի ամենամարդասեր մարդիկ իրենց բարեկամներին կարող եյին վայրկենապես զրկել վոչ միայն խոսելու ընդունակությունից, այլ և մինչև իսկ վորևե «անկախության» մասին խորհելուց:

Նոքա ուղղակի և վորոշ կերպով կը դնեյին ձեր առաջ մի յերկրնարանք. — դուք կամ կապիտալիստական կարգերի կողմը պետք է անցնեք և կամ Խորհուրդների: Նոքա կասեյին. «դուք պետք է այդպես անեք, վորովհետև այդ ասում ենք մենք, ձեր բարեկամները՝ անգլիացիները, ամերիկացիները, Վիլսոններներն ու Ֆրանսիացիները — Կլեմանսոյի բարեկամները»:

Այդ պատճառով մենք բացարձակապես վոչ մի հույս չենք կարող ունենալ թե կարող է պանպանվել զեթ վորևե անկախություն: Այդ չի կարող լինել, և զրա մասին մտածելն անհույս բան է: Յերբ մի կողմից սեփականությունը պահելու խնդիր, իսկ մյուս կողմից պրոլետարիատն անցել է իր պաշտպանության գիծը, արդեն միջին ճանապարհ լինել չի կարող:

Կյանքն ամուր կերպով պետք է հյուսի իր

Ճյուղերը կամ կապիտալի հետ և կամ թե ավելի ամուր կերպով Սորճրգային հանրապետութեան հետ: Բոլորի համար միանգամայն պարզ է, վոր պաշտպանել կամ պահպանել մանր բուրժուական զրությունը միանգամայն անկարելի չէ, յեթե ամբողջ ազգաբնակչութեանը ընտրական իրավունք տրվելու լինի: Գուցե պարոնայք Վիսոնները հենց այդ հուշերով ել կերակրվում են, ավելի ճիշտ՝ ձգտում են գունավորել իրենց սեփական նպատակները, կիրարկելով նման իլյուզիաները: Բայց յես պետք է ասեմ, վոր այդպիսի հեքիաթներին հավատացող մարդիկ դուք ներկայումս քիչ կարող եք գտնել. յեթե այդպիսի մարդիկ ել մնացել են՝ նոքա պատմական հազվագյուտ մի բան են, մի կուրյոզ, վորոնց տեղը թանգարանն է:

Յես պետք է ասեմ, վոր մեզ մոտ սկսված տարածութեանները, կոպերացիայի «անխախտութեանը» պահելու վերաբերյալ, փորձեր են, վորոնք պետք է վերջանան առանց դրական լուծում ստանալու հուշի: Այդ պայքարը լուրջ պայքար չէ: Մոռանում են, վոր այն բանաձևերը, վոր հանում է ամեն որ աշխարհիս ամենաուժեղ գասակարզը և անկասկած, պիտի հանի միաձայն կերպով նաև մեր համագումարը, վողջունում են միայն սրբութարիատի դիկտատուրան ամբողջ

աշխարհում: Հանելով այդ բանաձևը, մեր համագումարը կը մանի մի այնպիսի ճանապարհ, վորից վոչ մի կամուրջ չկայի այն «անխախտութեանը», վորի մասին խոսվում է այսօր այստեղ, չի մնա և չի կարող մնալ: Գուք զիտեք, վոր կարլ կիրկնեստը վոչ միայն վորոշակի ընդհանում եր մանր բուրժուական գուղացիութեանը, այլև կոպերացիային, դուք զիտեք, վոր նրան, այդ բանի համար Շեյքեմանը և կամ պանյան համարում են ֆանատոզոր և ֆանատիկ: Բայց այնուամենայնիվ դուք ինքներդ նրան, ճիշտ նույն կերպ ինչպես Մակլինին, հայանեցիք ձեր վողջույնը: Համաշխարհային մեծ առաջնորդներին ուղղամ համերաշխութեան այդ արտահայտութեամբ դուք այրեցիք ձեր բոլոր նավերը:

Գուք պետք է ամուր կերպով կանգնած լինեք ձեր զիրքերում, վորովհետև ներկայումս դուք պաշտպանում եք վոչ միայն ձեզ և ձեր իրավունքները, այլ և կիրկնեստի ու Մակլինի իրավունքները: Յես շատ անգամ եմ լսել թե ինչպես ուսու մենշեիկները գասապարտել են համաձայնողականութեանը, թե ինչպես նրանք սմբակոծում եյին այն մարդկանց, վորոնք պայմանավորվել եյին կայրերի սպասարկուների հետ: Միայն ուսու մենշեիկները չեն, վոր մեզ սակից են այդ բանում. ամբողջ աշխարհն եր

մասնացույց անուժ մեզ, նետելով մեր ճակատին «համաձայնողականներ» անունը: Իսկ այժմ, յերբ սկսվել է համաշխարհային հեղափոխությունը, յերբ նրանք ստիպված են խոսելու Հաագեյի և Կառլսկու հետ, այժմ իրավունքը մերն է ասելու, բնորոշելով մեր վիճակը սուսական գեղեցիկ առածով. «Կը հեռանանք ու կը գիտենք, թե մենք ինչքան լավ ենք նստում»... Մենք մեր պակասությունները գիտենք և նրանց ցույց ապ շատ գյուրին ե: Բայց հեռվից այդ ամենը յերևում է վոչ այնպես, ինչպես գոյություն ունի իրականություն մեջ: Գուք գիտեք, վոր յեզել է մոմենտ, յերբ չկար մեկը, վոր մեր վարքագիծը և քաղաքականությունը չգատապարտեր, իսկ այժմ մենք ամբողջ կուսակցություններ գիտենք, վորոնք յեկել են մեզ մոտ և կամենում են աշխատել մեզ հետ: Հեղափոխական շարժման համաշխարհային սզակն այժմ շրջվել է այն ձևով, վոր մենք կարողանապես չենք վախենում և վոչ մի համաձայնողականությունից: Յես կարծում եմ, վոր մեր համագումարն ևս կը գտնի իր ճիշտ յելքը ստեղծված կացությունից: Իսկ այդ յելքը մեկն է — դա կուսակերպիայի միացումն է Խորհրդային Իշխանությունը:

Գուք գիտեք, վոր Անգլիան, Ֆրանսիան,

Ամերիկան, Իսպանիան նայում էյին մեր գործողություններին, վորպես երապերիմենաների, իսկ այժմ նրանք այլ ձևով են նայում. նրանք նայում են իրենց սեփական պետություններին, թե այնտեղ վորե է բան չի կատարվում արդյոք: Իհարկե, Ֆիլիպական, նյու թական, Ֆինանսական տեսակետից նրանք բավականին ուժեղ են մեզ նից, բայց չնայելով նրանց արտաքին փայլին, մենք գիտենք, վոր նրանք փոռում են ներսից. նրանք ներկա մոմենտում ուժեղ են մեզնից այն ուժով, այն կարողությամբ, վորոնցով ուժեղ եր Գերմանիան Բրեստի հաշտությունը կնքելիս:

Բայց ինչ ենք տեսնում մենք այժմ: Այն ժամանակ մեզնից փախչում էյին ամենքը: Իսկ այժմ յուրաքանչյուր ամիս մենք պաշտպանում ենք վոչ միայն մեզ, այլ և այն գործը, վորը սկսել են Լիբլնիստը և Մակկինը: Մենք այժմ տեսնում ենք, թե ինչպես Անգլիան, Ֆրանսիան, Ամերիկան և Իսպանիան վարակվում են նոյն հիվանդությամբ, սկսում են վառվել այն կրակով, ինչ Գերմանիան: Իսկ այդ կրակը բանվոր դասակարգի և իմպերիալիզմի ընդհանուր և համաշխարհային պոլին է:

(Շխ. ժողովում, Զուրաշի, 9 հրես 581-589)





ԳԻՆՆ Ե 20 ԿՈՊ.

